community

The New Apostolic Church around the world

02/2023/AM

Ծառայել Աստծուն

Խմբագրական
Ամեն ինչ հաղթահարել

Ժամերգություն
Քրիստոսի հետ ծառայել և ղեկավարել

Վարդապետական ուսմունք
Կանանց ձեռնադրություն՝ Հինը և նորը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Հինը հաղթահարել

Ժամերգություն

4 Քրիստոսի հետ ծառայել և ղեկավարել

Մանկական անկյուն

10 Հիսուսը բուժում է տասը բորոտներին

12 Այցելություն Բրենոյին՝ Վարգեմ Գրանդե Պաուլիստայում / Բրազիլիա/

Տեսություն

14 Կանանց ձեռնադրություն՝ Հին և Նոր կտակարաններ

Ընդհանուր լուրեր

18 Կանանց ձեռնադրություն՝ վարդապետական ակնարկ

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Միխայել Մոնցերի
Շապիկի ետևի լուսանկարը՝ ՆԱԵ Շվեյցարիա

Ամեն ինչ հաղթահարել

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի եղբայրներ և քույրեր,

մեր մկրտությամբ կամ մեր կոնֆիրացիայով մենք երդվել ենք թողնել հին Ադամին: Մենք բացահայտ հայտարարել ենք Աստծուն հավատքով և հնազանդությամբ հետևելու և չարից հրաժարվելու մեր վճռականության մասին:

Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ մենք բոլոր ջանքերը գործադրենք Հիսուս Քրիստոսի օրինակին հետևելու համար: Այսպիսով, Քրիստոսն ամուր պահեց Աստծո խոսքը և հնազանդ մնաց նույնիսկ անապատում՝ սատանայի կողմից փորձության ենթարկվելուց: Նա մինչև վերջ վստահեց Հորը և նույնիսկ, երբ խաչի վրա նրա տառապանքը մեծ էր, համոզված էր. «Հայրս սիրում է ինձ»:

Մենք ցանկանում ենք հնազանդորեն և վստահությամբ լսել այն, ինչ Քրիստոսն այսօր մեզ կասի: Այսպիսով, Տերն ասում է մեզ, որ նախ փնտրենք Աստծո արքայությունը: Երկրայինը չպետք է չափազանց կարևոր դառնա, քանի որ խոսքը ոչ թե երկրի վրա կյանքի մասին է, այլ՝ հավիտենական կյանքի:

Դա նաև անձնական զարգացում է պահանջում, մենք Աստծուց շնորհներ ենք ստացել և պետք է օգտագործենք դրանք: Մենք պետք է մինչև վերջ աշխատենք և պայքարենք հավատքը պահելու համար:

Խոսքը մերձավորից ավելի մեծ լինելու մասին չէ: Մարդիկ հաճախ մյուսներից ավելին են ուզում : Աստծո արքայությունում դրա համար տեղ չկա:

Եղբայր, քույր, եկեք սիրտ ունենանք Հիսուս Քրիստոսի և այն ամենի համար, ինչ նա պետք է մեզ այսօր նորից ու նորից ասի:

Հարգանքներով

Ժան-Լյուք Շնայդեր

Քրիստոսի հետ ծառայել և ղեկավարել

Հայտնություն 20:6

Երջանիկ ու սուրբ է նա, ով բաժին ունի առաջին հարության մեջ: Այդպիսիների վրա երկրորդ մահը իշխանություն չունի, այլ նրանք Աստծու և Քրիստոսի քահանաները կլինեն և նրա հետ կթագավորեն հազար տարի:

100-ամյակի կապակցությամբ Այբենշթոքի (Գերմանիա) համայնքը սպասում էր գլխավոր առաքյալի այցին

Լուսանկարները՝ Միխայել Ռուցերի

Սիրելի եղբայրներ և քույրեր, մենք շատ երախտապարտ ենք Աստծուն, որ կարողացանք այստեղ միասին ապրել այս յուրահատուկ տոնը: Ուղիղ 100 տարի առաջ այստեղ նշանակվել է համայնքի առաջնորդ, և սա հազվադեպ է, որ համայնքը կարողանում է հարյուրամյակը նշել այսքան մեծ շրջանակում: Մենք երախտապարտ ենք Աստծուն բոլոր օրհնությունների, բոլոր լավ ու գեղեցիկ բաների համար, որ նա տվել է համայնքին այս հարյուր տարվա ընթացքում: Հարյուր տարվա համայնքային կյանք - կարելի է պատկերացնել, որ եղել են վերելքներ և վայրէջքներ, և միշտ չէ, որ հեշտ է եղել: Բայց սիրելի Աստվածը հավատարիմ էր և միշտ իր յուրայինների հետ է եղել: Նախորդների համար ևս այս հարյուր տարիների ընթացքում հաճախ հեշտ չի եղել: Բայց նրանք միշտ հիմնավորում էին գտնում չհուսահատվելու ու շարունակելու:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ուզում եմ զգուշացնել վտանգի մասին: Յուրաքանչյուր սերունդ, իսկ ես տպավորություն ունեմ, որ հատկապես մեր սերունդը կարծում է, որ երբեք ավելի դժվար չի եղել, քան այսօր: Բայց դա այդպես չէ: Մեզանից ո՞վ կցանկանար հարյուր տարի հետ գնալ և ապրել

այդ պայմաններում: Հավատարիմ մնալու համար միշտ պայքար է եղել: Հավատարիմ մնալու համար միշտ ջանք ու կամքի ուժ է պահանջվել: Բայց եթե մեր նախնիներին հաջողվել է հավատարիմ մնալ ու չնայած բոլոր դժվարություններին՝ նրանք հրաժարվելու պատճառ չեն տեսել, ինչո՞ւ մենք այսօր ասենք՝ «Այո, բայց մենք չենք կարող»: Հանձնվելու պատճառ չկա: Եկեք շարունակենք հետևել Տիրոջը: Այն, ինչ նա արել է հարյուր տարի առաջ, նա կշարունակի անել մեզ համար ապագայում: Նա մեզ միշտ ուժ կտա մինչև վերջ հավատարիմ մնալու: Եկեք դադարեցնենք հավերժական բողոքն ու նվնվոցը: Հիմա ավելի դժվար չէ, քան եղել է մեր նախնիների համար: Տերը հավատարիմ է: Նա մեզ ուժ կտա, որն անհրաժեշտ է մինչև վերջ հավատարիմ մնալու համար: Եվ բոլոր նրանք, ովքեր իսկապես ցանկանում են դա, կհասնեն դրան:

Աստված գործի դրեց իր ծրագիրը, նա դրեց փրկության ծրագիր՝ անմիջապես մեղքի մեջ ընկնելուց հետո՝ մարդկանց հանդեպ սիրուց ելնելով: Մարդիկ մեծ հիմարություն են արել՝ նրանք մեղքի մեջ են ընկել: Իսկ Աստված անմիջապես ասել է ,, Ես ինչ-որ բան կձեռնարկեմ, ես ուզում եմ ձեզ բերել ինձ հետ միասնության: Դուք միասնություն կունենաք ինձ հետ և միմյանց հետ»: Սա մենք անվանում ենք փրկության ծրագիր, ազատության ծրագիր: Եվ Ամենակարող Աստված դա կհասցնի մինչև վերջ: Ո՞րն է Աստծո փրկության ծրագրի ավարտը՝ մարդկանց կատարյալ միասնությունը Աստծո և միմյանց հետ նոր արարչագործության մեջ: Հետո նորից ամեն ինչ կլինի ճիշտ այնպես, ինչպես Աստված էր ուզում՝ արարչագործությունը, մարդը, մարդկանց փոխհարաբերությունները, մարդկանց փոխհարաբերությունը Աստծո հետ: Դա է փրկության ծրագրի նպատակը: Եվ 2023 թվականը պարզապես այս փրկության ծրագրի մի փուլն է: Ինչ էլ որ լինի այս տարի -ես պատկերացում չունեմ, թե ինչ է լինելու- բայց ես մի բան գիտեմ, որ 2023 թվականի ամեն օրը մեր Աստծո փրկության ծրագրի մի մասն է: Ինչ էլ որ լինի, նա կհոգա, որ կարողանա շարունակել իր ծրագիրը՝ մեզ հետ, թե՝ առանց մեզ, դա մեզնից է կախված:

Աստված ցանկանում է, որ մարդիկ կարողանան միասնություն ունենալ իր հետ և միմյանց միջև: Դա անելու համար նա արդեն կոնկրետ քայլեր է ձեռնարկել : Առաջին կոնկրետ քայլը Աստծո Որդու մարդացումն էր: Հիսուս Քրիստոսն առաջին մարդն է, ով հենց այնպիսին էր, ինչպիսին Աստված էր ուզում, որ նա լիներ: Նա առաջին մարդն է, ով որպես մարդ՝ կարողացավ հարության մարմնով Աստծո հետ կատարյալ միասնության մեջ մտնել:

Իսկ ի՞նչ կանեն մարդիկ, երբ ավարտվի փրկության ծրագիրը, երբ նրանք լինեն նոր արարչագործության մեջ: Նրանք հավիտյան կծառայեն Աստծուն և կթագավորեն նրա հետ, ասում է Հայտնությունը: Նոր արարչագործության մեջ մարդիկ ծառայելու և ղեկավարելու են Աստծո հետ: Ինչպե՞ս են նրանք ծառայելու Տիրոջը: Նրանք կփառաբանեն և կերկրպագեն նրան հավիտյան: Շնորհակալությունն ու գովաբանությունը երբեք չեն սպառվի, քանի որ այն, ինչ Աստված կտա, այնքան մեծ է, որ հիմք կա նրան գովաբանելու, շնորհակալություն հայտնելու, նրան հավիտյան երկրպագելու:

Իսկ ինչպե՞ս են կառավարելու նրա հետ: Սա ոչ մի կապ չունի որևէ իշխանության հետ, ինչպես որ մենք գիտենք: Սա իշխանության իրականացում չէ: Նրանք կմասնակցեն մեղքի դեմ Քրիստոսի հաղթանակին: Երբ խոսում են հավիտենական կյանքի պսակի մասին, դա ոչ թե թագավորի կամ թագուհու թագն է, այլ չարին ու մեղքին հաղթածի հաղթանակի պսակը: Նրանք իշխելու են նրա հետ, քանի որ Քրիստոսի օգնությամբ նրանք վերահսկել են մեղքը և կիսում են Աստծո փառքը: Այս կերպ նրանք կծառայեն Տիրոջը հավիտյանս հավիտենից: Սա է Աստծո ծրագիրը և սա է նրա աշխատանքի նպատակը:

> Տերը հավատարիմ է: Նա մեզ հավատարիմ մնալու ուժ կտա :

Փրկության այս ծրագրի հաջորդ հիմնական փուլը առաջին հարությունն է, այնուհետև հազարամյա թագավորությունը, որը մենք ավանդաբար անվանում ենք խաղաղության թագավորություն: Ի՞նչ է լինելու այնտեղ: Տերը նորից է գալու, որպեսզի իր հետ տանի իր յուրայիններին և նրանց՝ որպես առաջնեկների, առաջնորդի դեպի միասնություն, դեռևս ոչ դեպի նոր արարչագործություն, այլ՝ Աստծո և միմյանց հետ միասնություն: Իսկ հարսնացուական համայնքը որպես առաջնեկ - իսկ առաջին մարդը Հիսուս Քրիստոսն էր- կընդգրկվի այդ միաբանության մեջ: Խաղաղության հազարամյա թագավորությունում նրանք՝ որպես Աստծո քարոզիչներ, հազար տարի կթագավորեն նրա հետ: Իսկ ինչպե՞ս են նրանք ծառայելու Աստծուն խաղաղության արքայությունում: Նրանք հավերժ կփառաբանեն, կերկրպագեն, կգովաբանեն Աստծուն: Երբ Աստվածաշունչը Աստծո ծառայի մասին է խոսում, դա նշանակում է, որ այդ անձը երկրպագում է Ամենակարող Աստծուն:

Ծառայությունն ըստ Աստվածաշնչի ոչ մի կապ չունի այն ծառայության հետ, որը մեզ ծանոթ է: Ծառան երկրպագում է Աստծուն, վստահում է Աստծուն, գովաբանում ու փառաբանում է նրան: Իսրայելացիները Աստծո ծառաներն էին, քանի որ նրանք պետք է երկրպագեին ճշմարիտ Աստծուն և գովաբանեին ու փառաբանեին նրան: Այսպիսով, խաղաղության հազարամյա թագավորությունում ծառայությունը նախևառաջ երկրպագության և գովաբանության ծառայություն է: Ավելին, Աստծո և Քրիստոսի քարոզիչները կծառայեն Աստծուն՝ քարոզելով Ավետարանը, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան գտնել դեպի Աստված տանող ճանապարհը և քայլել այդ ճանապարհով :

Այստեղ ասվում է նաև, որ նրանք Նրա հետ թագավորելու են: Ինչպե՞ս պետք է նրանք կառավարեն: Մի անհանգստացեք, մենք գործ չունենք երկրի ու աշխարհի ղեկավարության հետ: Հիսուսը շատ հստակ է ասել. «Իմ թագավորությունն այս աշխարհից չէ: Դրա պատասխանատուն ժողովուրդն է: Ինչպես են նրանք դա անում այս երկրի վրա, ինչպես են կազմակերպում հասարակությունը, դա իրենց գործն է»: Հիսուսը չի գա և ասի. «Ես կարգուկանոն կստեղծեմ»: Դա շարունակելու է մնալ ժողովրդի առաջադրանքը: Նրանք չեն կառավարելու նաև այն բանի պատճառով, որ իրենք շատ ավելի լավն են, քան մյուսները: Նրանք ունեն այս հաղթանակի պսակը, քանի որ Հիսուս Քրիստոսի օգնությամբ նրանք հաղթահարեցին մեղքը: Նրանք ունեն նույն հարության մարմինը, ինչ Հիսուս Քրիստոսը, նրանք կիսում են Աստծո փառքը: Նրանք նաև ունեն Հիսուս Քրիստոսի իշխանությունը, քանի որ ուղարկված են Նրա կողմից: Որպես Հիսուս Քրիստոսի դեսպաններ, նրանք ունեն իրենց առաքելության այդ ուժն ու զորությունը: Դա նշանակում է, որ ոչ ոք չի կարող խանգարել նրանց՝ կատարելու իրենց առաքելությունը:



Ժամերգությունը Աստծուն ծառայելու հնարավորություն է:

Սա Աստծո փրկության ծրագիրն է: Նա կշարունակի նախապատրաստել դա նաև 2023 թվականին: Յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է, կարող է դա ունենալ: Բայց մենք պետք է նախապատրաստվենք դրան: Ահա թե ինչու մենք ունենք 2023 թվականի նշանաբանը՝ մենք ցանկանում ենք ծառայել և ղեկավարել Քրիստոսի հետ: Մենք դա պետք է սովորենք այսօր: Թող դա լինի մեր ծրագիրը ամեն օր գալիք տարվա ընթացքում, որ մենք միշտ մոտիվացված և կենտրոնացած լինենք այս նշանաբանի շուրջ՝ ես ուզում եմ ծառայել և ղեկավարել Քրիստոսի հետ:

Առաջին ծառայությունը դա ժամերգությունն է: Արդեն Հին Կտակարանում Աստծո ծառայությունը կայանում էր նրանում, որ Աստծուն երկրպագել են, նրան գովաբանել և փառաբանել են: Նոր արարչագործության մեջ ծառայությունը մաքուր երկրպագություն է, փառաբանություն: Առաջին ծառայությունը, որ հավատացյալը պետք է մատուցի Աստծուն, դա ժամերգությունն է: Դա նշանակում է, որ նա թողնում է իր առօրյան, իր հարմարավետությունը, թողնում է ամեն ինչ և գնում դեպի Աստված՝ երկրպագելու նրան: Դա է ժամերգության իմաստը: Բերում ենք Աստծուն այն երկրպագությունն ու գովաբանությունը, որին նա արժանի է: Մեր կոչումն է՝ հավիտյան ծառայել, երկրպագել ու փառաբանել Աստծուն: Ժամերգությունը հնարավորություն է այսօր դա սովորելու համար: Երբ մենք գալիս ենք ժամերգության, մենք երկրպագում ենք Աստծուն, գովաբանում և փառաբանում ենք նրան: Երբ մենք միասին տոնում ենք Սուրբ Հաղորդությունը, մենք շնորհակալություն ենք հայտնում Հիսուս Քրիստոսի զոհաբերության համար:

Մենք ծառայում ենք Տիրոջը՝ զոհաբերություններ անելով, ինչպես հրեաներն էին անում Հին Կտակարանում: Խոսքը հոգևոր զոհաբերությունների մասին է: Երբ գալիս ենք ժամերգության, մենք ներում ենք մեր մերձավորին և այդպիսով զերծ ենք մնում վրեժխնդրությունից, հատուցումից, մեղադրանքից: Սա Աստծուն հաճելի զոհաբերություն է: Ինչու՞ ենք մենք դա անում: Որովհետև մենք ուզում ենք միասնության մեջ լինել Աստծո հետ: Աստված մարդուն մեղադրող Աստված չէ: Դա հարիր չէ Աստծուն, ում մեզ համար բացահայտեց Հիսուս Քրիստոսը:

Մենք գալիս ենք եկեղեցի՝ լսելու Աստծո կամքը, որովհետև նոր արարչագործության մեջ մտնելու համար մենք պետք է լիովին համապատասխանենք



Աստծո կամքին: Ես պետք է հրաժարվեմ այն ամենից, ինչը չի համապատասխանում Աստծո կամքին: Իսկ երբ գալիս ենք ժամերգության, լսում ենք Աստծո կամքը և նկատում. «Օ, այո, սա հիմա Աստծո կամքին չի համապատասխանում, սրա հետ սիրելի Աստված համաձայն չէ, ես պետք է հրաժարվեմ այս կարծիքից, ես պետք է հրաժարվեմ տվյալ բնավորության գծից »: Եվ այսպես մենք ծառայում ենք Տիրոջը ժամերգության ժամանակ:

Մենք նաև ծառայում ենք Տիրոջը՝ ծառայելով մեր մերձավորին: Հիսուս Քրիստոսն ասել է. «Ով ուզում է ինձ ծառայել, նա պետք է բարություն անի իր մերձավորին»: Նա դա ցույց տվեց ոտնլվայի արարողությամբ: Նա չի եկել, որ իրեն ծառայեն, այլ, որ ինքը ծառայի: Աստծուն ծառայելը նաև մերձավորին ծառայելն է: Մենք էլ ենք ուզում դա անել: Վերջերս ես զայրացա այն բանի վրա, երբ նկատեցի, որ հավատացյալ քույր-եղբայրները ասում են, որ նրանք լքում են ժամերգությունը, քանի որ ուզում են ինչ-որ բան ստանալ:

Ես դա կարող եմ հասկանալ, բայց մի՞թե դա եսասիրական չէ: Ես ժամերգության եմ գալիս միայն այն ժամանակ, երբ ինչ-որ բանի կարիք ունեմ կամ երբ կարող եմ ինչ-որ բան ստանալ: Իսկ ի՞նչ եղավ ծառայության հետ: Դա բոլորովին վերացավ:: Բայց ես նաև ժամերգության եմ գալիս, որպեսզի աղոթեմ եղբորս հետ: Ես նաև գալիս եմ ժամերգության, որպեսզի իմ քրոջը ցույց տամ. «Ես քո կողքին եմ, արի հիմա միասին աղոթենք»: Ես գալիս եմ ժամերգության և օգնում եմ այն ձևավորել, որպեսզի եղբայրս, քույրս կարողանան ժամերգությունն ապրել, միայնակ մենք չենք կարող դա անել: Պետք է համայնք լինի, որպեսզի կարողանան ապրել ժամերգությունը: Եթե ես երբևէ չեմ կարողանում ապրել ժամերգությունը, այնուամենայնիվ, աջակցում եմ, որ իմ մերձավորը կարողանա այն ապրել: Դա նույնպես Աստծուն ծառայելու մաս է: Ես ծառայում եմ իմ մերձավորին՝ քարոզելով Ավետարանը խոսքով և գործով: Դա Աստծո ծառայությունն է: Երբ մենք օգնում ենք մեր մերձավորին, մխիթարում ենք նրան, զորացնում և աշխատում ենք միասին, ապա այդպես մենք ծառայում ենք Աստծուն: Եվ մենք ծառայում ենք Քրիստոսի հետ, քանի որ լավագիտենք, որ ինչ էլ որ մենք անում ենք, դրա մեծ մասն արել է Հիսուս Քրիստոսը: Մեղքը դարանակալված է քո առջև, բայց դու իշխում ես դրա վրա: Սա է իշխելը: Մենք պետք է իշխենք մեղքի վրա: Իհարկե, մենք ենթակա ենք գայթակղության: Բայց դավանաբանության մեջ ասվում է՝ մարդն առանց իր կամքի չի ենթարկվում գայթակղության: Երբեմն մեզ մոտ տպավորություն է ստեղծվում, որ այլ բան չենք կարող անել: Մեզ տանում է մարդկանց հոսքը: Ոչ, մենք ստիպված չենք անել այն ամենը, ինչ մեզ առաջարկվում է, անել այն ամենը, ինչ անում են ուրիշները: Մենք կարող ենք ,, ոչ,, ասել: Մեղքը դարանակալված է քո դռան առաջ, բայց դու իշխում ես դրա վրա: Քրիստոսի օգնությամբ դուք կարող եք «ոչ» ասել մեղքին: Դու

Հուզիչ էր ննջեցյալների համար տոնվող Սուրբ Հաղորդությունը

Ես կցանկանայի, որ Աստծո յուրաքանչյուր զավակ այսպես մտածի՝ իմ միասնությունը Հիսուս Քրիստոսի հետ ինձ համար ամենակարևորն է, ոչ ոք չի կարող դրան հավասարվել: Մենք այսպես ենք ուզում կառավարել:

Դա կարող է անիրագործելի թվալ: Այո՛, Քրիստոսի հետ կառավարելը բացարձակապես հնարավոր է, որովհետև Հիսուս Քրիստոսը մեզ ուժ է տալիս դա անելու: Նա կրկին ու կրկին ցույց է տալիս մեզ իր սերը, ինչն էլ մեզ մոտիվացնում է միասնություն ունենալ նրա հետ: Նրա սերն այնքան մեծ է: Նա միշտ մեզ նվիրում է իր ողորմածությունը: Իսկ եթե չի ստացվում, նա մեզ նորից սկսելու հնարավորություն է տալիս, դու կարող ես ամեն ինչ նորից սկսել: Իր Սուրբ Հոգու միջոցով նա մեզ իմաստություն է տալիս, որպեսզի մենք կարողանանք ճանաչել ոգիներին: Քրիստոսի օգնությամբ, եկեք դա նկատի ունենանք, մենք այսօր արդեն կարող ենք թագավորել: Մենք կարող ենք վերահսկել մեղքը և կարող ենք վերահսկել մեր կյանքը, մեր անձը և մեր ապագան: Եկեք ծառայենք Աստծուն Քրիստոսի հետ և եկեք արդեն այսօր Քրիստոսի հետ թագավորենք մեր կյանքում : Այնուհետև, երբ Տերը գա, նա կարող է մեզ տանել իր թագավորություն: Երբ մեզ թույլ տրվի ծառայել նրա հետ, գովաբանել, երկրպագել, փառաբանել և կառավարել Նրա հետ, այդ դեպքում մենք կարող ենք ասել. «Հիսուս Քրիստոսի օգնության և նրա զոհաբերության շնորհիվ մենք հաղթեցինք մեղքին: Մենք վերահսկում ենք մեղքը»:

կարող ես ասել, «Ոչ, ես դա չեմ անում՝ անկախ նրանից, թե ինչ հետևանքներ կունենա ինձ համար, դա մեղք է, դա Աստծո կամքին հակառակ է»: Եկեք կառավարենք մեր կյանքը, վերահսկենք մեր կյանքը և ինքներս մեզ: Այո, կան շատ մարդիկ, ովքեր ասում են, որ այսօր մարդիկ պարզապես խամաճիկներ են, ինչ-որ մեկը քաշում է թելերը, և դու իրականում կարող ես նրանց հետ անել այն, ինչ ուզում ես, բայց ոչ ինձ հետ: Սատանան չի կարող ինձ հետ անել այն, ինչ ուզում է: Քրիստոսի օգնությամբ ես կարող եմ կառավարել իմ կյանքը և իմ բնությունը:

Սիրելի եղբայրներ և քույրեր, մեր նպատակը Աստծո հետ կատարյալ միասնությունն է: Ցանկության դեպքում մենք կարող ենք հասնել այս նպատակին: Եկեք մեր կյանքը վերահսկենք և կառավարենք, ինքներս որոշենք, թե ինչպիսին պետք է լինի մեր ապագան: Մեր ապագան մռայլ փակուղի չէ, դա փառավոր ապագա է՝ միասնություն Աստծո հետ, փրկության ծրագրի ավարտ: Անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում աշխարհում, անկախ մեծամասնության կարծիքից, անկախ նրանից, թե ինչպես են վարվում իմ մերձավորները ,սա պետք է զրոյական ազդեցություն ունենա Աստծո հետ իմ հարաբերությունների վրա: Գլխավոր առաքյալ Լեբերը հաճախ ասում էր. «Եկեք գործենք անկախ »: Անկախ նրանից, թե ես ինչպես ե՝ հիվանդ եմ, թե առողջ, իմ հիվանդությունը չպետք է ազդի Աստծո հետ իմ հարաբերությունների վրա: Կապ չունի՝ փող ունեմ, թե ոչ, իմ բանկային հաշիվը չի թելադրում իմ հարաբերությունները Աստծո հետ: Ես որոշել եմ՝ ես ուզում եմ միասնություն ունենալ Աստծո հետ:

Հիմնական մտքեր

- Աստված մեզ ընտրել է Քրիստոսի հետ ծառայելու և ղեկավարելու:
- Մենք կծառայենք նոր արարչագործության մեջ՝ երկրպագելով Աստծուն:
- Խաղաղության արքայությունում մենք կծառայենք և կղեկավարենք Քրիստոսի հետ:
- Մենք այսօր ծառայում ենք Քրիստոսին՝ հաճախելով ժամերգության և կատարելով Նրա կամքը:
- Քրիստոսն օգնում է մեզ վերահսկել մեր կյանքը:

ՀԻՍՈՒՍԸ ԲՈՒԺՈՒՄ Է ՏԱՍԸ ԲՈՐՈՏՆԵՐԻ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 17, 11-19

Հիսուսը բուժում է շատ մարդկանց: Այն, որ նրանք բժշկվել են, նրա զորության նշանն է: Մարդիկ կփրկվեն, երբ գա Աստծո արքայությունը:

Երբ Հիսուսը գնում էր Երուսաղեմ, նա անցնում էր Սամարիայի և Գալիլեայի միջով: Մի գյուղում նա հանդիպում է տասը հիվանդ տղամարդու: Նրանք բորոտ էին և հետևաբար մարդկանցից հեռու էին մնում: Տղամարդիկ բղավում են. «Հիսո՛ւս, սիրելի Վարդապետ, ողորմիր մեզ»:



Հիսուսն ասում է նրանց.,,
Գնացեք և ձեզ ցույց տվեք
քահանաներին,,:
Նրանք այդպես էլ անում են և
մաքրվում են:
Երբ տղամարդկանցից
մեկը հասկանում է, որ
ապաքինվել է, վերադառնում
է: Նա փառաբանում է
Աստծուն բարձր ձայնով,
ընկնում է Հիսուսի առաջ և
շնորհակալություն է հայտնում
նրան: Նա սամարացի էր, մի
օտարական:

Հիսուսը հարցնում է. «Չէ՞ որ
տասը բժշկվեցին. Որտե՞ղ են
մնացած ինը: Ինչո՞ւ նրանք
նույնպես չեկան Աստծուն
փառք տալու: Մի՞թե այս
անծանոթը միակն է, ով
շնորհակալություն է հայտնում
Աստծուն»:
Հիսուսն ասաց սամարացուն.
«Վե՛ր կաց և գնա տուն. Քո
հավատքն օգնել է քեզ»:



Աղբյուր՝ ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հատարակություն 10 2022 թ.; Նկարագրությունը՝ Միրելյա Ճորտունաոոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԲՐԵՆՈՅԻՆ՝ ՎԱՐԳԵՄ ԳՐԱՆԴԵ ՊԱՈՒԼԻՍՏԱ / ԲՐԱԶԻԼԻԱ/

Օլա, ես Բրենոն եմ: Օլան պորտուգալերեն է և նշանակում է՝ բարև: Բրազիլիան Հարավային Ամերիկայի միակ երկիրն է, որտեղ խոսում են պորտուգալերեն: Իրականում այն ավելի քան 300 տարի պորտուգալական գաղութ էր:

Ես ծնվել եմ Սան Պաուլոյում ութ տարի առաջ: Քաղաքը հիմնադրվել է 1554 թվականին Պորտուգալիայի քրիստոնյա միսիոներների կողմից; Նրանք այն անվանել են Պողոս առաքյալի անունով: Այսօր այստեղ ապրում է ավելի քան տասնմեկ միլիոն մարդ, Սան Պաուլոն Բրազիլիայի ամենամեծ քաղաքն է:

Երբ ես երեխա էի, ընտանիքս ինձ տարավ ժամերգության Սան Բերնարդո դո Կամպոյում: Մի քանի տարի անց մենք տեղափոխվեցինք Սանտո Անդրե և այնտեղ այցելեցինք տեղի համայնք:

Ընթացքում մենք նորից տեղափոխվեցինք և հիմա ապրում ենք Վարգեմ Գրանդե Պաուլիստայում: Սա նույնպես մոտ է Սան Պաուլոյին: Այնտեղ մինչ օրս Նորառաքելական համայնք չկա: Դրա համար մենք ամեն շաբաթը մեկ գնում ենք Սանտո Անդրե և այնտեղ մասնակցում ժամերգությանը: Եթե չենք կարողանում գնալ, ապա հեռուստացույցով ենք դիտում ժամերգությունը: Մենք առցանց ենք մասնակցում ժամերգություններին նաև չորեքշաբթի օրերին: Հեռարձակումները մեզ շատ օգնեցին Կորոնավիրուսի համաճարակի ժամանակ:

Քույրս՝ Ջուլիան, վեց տարեկան է: Նա էլ ինձ նման հաճախում է կիրակնօրյա դպրոց: Դասերը բազմազան են, և մենք սովորում ենք խաղալով, ինչը մեզ շատ է դուր գալիս: Մեր կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհու անունը Սելմա է: Նա սիրալիր է, և մենք նրան շատ ենք սիրում: Մեզ շատ են դուր գալիս նաև համայնքի մյուս անդամները:

Տեղափոխվելուց առաջ ես անհանգստանում էի՝ ինչպիսի՞ն կլինի այս նոր դպրոցում: Բայց ինձ ջերմորեն ընդունեցին, և ես արագ նոր ընկերներ գտա: Իմ լավագույն ընկերոջ անունը Ժոաո է: Ես հիմա երրորդ դասարան եմ: Այստեղ ես կատարում եմ իմ տնային աշխատանքը:

Դպրոցում սովորում եմ շախմատ և երաժշտություն, այս պահին սովորում եմ ֆլեյտա նվագել: Տանը մի քիչ նվագում եմ մորս հին ստեղնաշարային գործիքով: Պարզ երգերը բավականին լավ են ստացվում:

Ես ֆուտբոլ եմ խաղում մարզադպրոցներից մեկում: Ես սիրում եմ մարզումների գնալ: Ֆուտբոլը Բրազիլիայում ամենասիրված սպորտաձևն է, և մեր ազգային հավաքականը համարվում է լավագույններից մեկը աշխարհում: Նա արդեն հինգ անգամ աշխարհի չեմպիոն է դարձել: Ցանկանում եմ հետագայում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ դառնալ;

Ես ունեմ մի փոքրիկ շնիկ՝ Տինինյան, ում ես լավ եմ խնամում: Ես նաև օգնում եմ տան գործերին՝ պատրաստում եմ անկողինս, զցում եմ սեղանը և մաքրում ամանները, քամում նարնջի հյութը և նույնիսկ բլիթներ եմ թխում: Մենք երբեմն ծնողների հետ ֆիլմեր ենք դիտում և ադիբուդի ուտում՝ հմմմ, համեղ է:

Աղբյուր՝ ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն՝ թիվ 10 2022 թ.; Լուսանկարները՝ մանանախի; stock.adobe.com – Flavio França, ASTA Concept, Snejana Sityaeva

Կանանց ձեռնադրություն՝ Հին և Նոր Կտակարաններ

Աստվածաշնչյան վերլուծությունը ցույց է տալիս, որ տղամարդն ու կինը ստեղծվել են նույն կերպ՝ Աստծո պատկերով: Ի՞նչ աստվածաբանական եզրակացություններ է անում եկեղեցին դրանից: Իսկ ինչպես է դա եղել վաղ քրիստոնեության մեջ -«Կանանց ձեռնադրություն» թեմայով շրջաբերականի երկրորդ մաս:

Հիմնվելով աստվածաշնչյան վկայության վրա (տես՝ community 1/2023), տղամարդն ու կինը, կինը և տղամարդը ստեղծված են Աստծո պատկերով: Երբ դավանաբանությունն ասում է, որ տղամարդն ու կինը «տարբեր են», ապա նկատի է առնված նրանց կենսաբանական տարբեր կազմավորումները, նրանց տարբեր սեռերը, և ոչ թե՝ անձնային անհավասարությունը:

«Մարդ լինելը նշանակում է լինել կոնկրետ սեռային կերպարով, մտավոր կարողություններով և շնորհներով սուբյեկտ և անհատ, ունենալ ազատություն և խոսելու կարողություն, կարողանալ գործել, ունենալ սեփական պատմություն, կարողանալ ապրել փոխհարաբերությունների մեջ և կարողանալ սիրել,,: Տղամարդը և կինը ունեն հավասար արժանապատվություն, թեև կենսաբանորեն տարբեր զուգընկերներ են:

Աստված բացահայտում է մարդուն որպես «Աստծո պատկերի»

Մարդու՝ որպես «Աստծո կերպարի» մասին խոսելը ոչ մի կերպ չպետք է հավասարեցնի Աստծո և մարդու անսահման որակական տարբերությունը: Դավանաբանությունը հստակ խոսում է Աստծո էությունը մարդուց բխեցնելու անհնարինության մասին. «Այն փաստը, որ մարդը ստեղծվել է Աստծո պատկերով, չի նշանակում, սակայն, որ կարելի է եզրակացնել, որ Աստծո էությունը բխում է մարդու անձից, ինչը հատուկ է միայն Հիսուսին (ՆԱԵԴ 3.3.2):

Եթե մարդու մասին խոսվում է որպես Աստծո պատկերի, ապա դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե դա արվում է Աստծո տեսանկյունով: Մարդը որպես Աստծո պատկեր՝ կարելի է ճանաչել և հասկանալ միայն բացահայտվող և խոսող Աստծուն հղում անելով: Աստծո ինքնահայտնությունը մարդու, նրա արարված լինելու, էության և աշխարհում ունեցած նրա առաջադրանքի ճիշտ ըմբռնման նախապայմանն է:

Տղամարդն ու կինն ունեն նույն առաջադրանքը

Դավանաբանությունը հստակորեն նշում է, որ տղամարդն ու կինը ստացել են երկրի վրա «թագավորելու» նույն առաջադրանքը, այն է՝ ձևավորելու և պահպանելու այն» (ՆԱԵԴ3.3.2): Տղամարդու և կնոջ «տիրակալությունը» էականորեն ոչ մի կերպ չի տարբերվում, ուստի նրանք չունեն իրենց «տիրակալության տարածքները», որոնք միայն իրենցն են, ինչպես հուշում է գենդերային դերերի ավանդական ըմբռնումը: Այնպես չէ, որ Աստված որոշել է, որ տղամարդու գործունեության և ձևավորելու ոլորտը լայն աշխարհն է, իսկ կնոջը՝ տան, աշխատանքի և ընտանիքի փոքր աշխարհը:

Որպես Աստծո պատկեր՝ երկու սեռերին էլ պոտենցիալ վստահված է երկրային արարչագործությունը որպես ամբողջություն, նույնիսկ եթե դա չի իրականացվում մշակութային և կրոնական ավանդույթներով: Այն կարող է պահպանվել և ձևավորվել միայն նրանց կողմից միասնաբար:

Հետևաբար, յուրաքանչյուր անհատի համար հնարավոր չէ իրականացնել Աստծո առաջադրանքը՝ կառավարելու իր համար, դա կարող է հաջողվել միայն միասնության և համերաշխության պարագայում: Պահպանելն ու ձևավորելը իր առաջին կոնկրետ արտահայտությունն է գտնում սեռերի համակեցության կամ երեխաների դաստիարակության մեջ: Ամուսնական և ընտանեկան կյանքը հավասարապես ձևավորվում և աջակցվում է տղամարդու ու կնոջ կողմից: Բացի այդ, երկրային արարչագործությունը պահպանելու

և ձևավորելու խնդիրն այն է, որ տղամարդն ու կինը պատասխանատվություն ստանձնեն հավասար հիմունքներով:

Հասարակական իրականությունն ընկալելուց, դրա հետ գործ ունենալուց և դրան մասնակցելուց հրաժարվելը նույնպես հակասում է մերձավորին սիրելու պատվիրանին, որը տրված է բոլոր մարդկանց: Վերջապես, տղամարդն ու կինը կանչված են գիտակցելու իրենց պատասխանատվությունը արարչագործության հոգացության համար, որի մասն են կազմում կենդանիներն ու բույսերը, և գործելու համապատասխանաբար:

Եզրակացություն՝ Նորառաքելական եկեղեցին սովորեցնում է, որ կինն ու տղամարդը ստեղծված են «Աստծո պատկերով» և ունեն նույն էությունն ու արժանապատվությունը: Երկուսն էլ կոչված են միասին «տիրելու՝ նրանք պետք է պաշտպանեն և ձևավորեն արարչագործությունը: Ուստի՝ Աստծո պատկերով ստեղծված լինելը արարչագործության կարգի տարր է, քանի որ այն կազմում է մարդու անխուսափելի կողմնորոշումը դեպի Աստված: Երկրային արարչագործությունը պահպանելու և ձևավորելու խնդիրը ներառում է նաև կնոջ և տղամարդկու պատասխանատվությունը հավասար հիմունքներով:

Կինը Նոր Կտակարանում

Աստծո պատկերով մարդու ստեղծված լինելը տղամարդու և կնոջ էական ինքնության հիմքն է: Այս բացահայտումը հիմք է այն փաստի համար, որ երկուսին էլ կարելի է հավասարապես վստահել պաշտոնն ու ծառայությունը եկեղեցում և համապատասխան տեղական համայնքում: Եթե դառնանք Նոր Կտակարանի վկայություններին, միանշանակ պատկեր չի ստացվում: Կանանց դերը եկեղեցում առաջին դարում, այսինքն՝ Նոր Կտակարանի ժամանակներում, բոլորովին այլ էր:

Կանայք Ավետարաններում

Համատես Ավետարաններում (Մարկոս, Մատթեոս, Ղուկաս), ինչպես նաև Հովհաննեսի Ավետարանում նշվում է, որ Հիսուսը խոսել է կանանց հետ, ուսուցանել նրանց (Ղուկաս 10:38-42), բուժել նրանց և հոգացել նրանց կարիքները: Հիսուսի անմիջական շրջապատում, ըստ Ղուկաս 8:1-3-ի, կան ոչ միայն տղամարդիկ, այլ նաև «որոշ» կանայք: Հիսուսը բժշկել էր ոմանց, իսկ «շատ ուրիշներ», այսինքն՝ նրանք, ովքեր համոզվել էին Աստծո արքայության մոտ լինելու մասին նրա քարոզչության մեջ, միացել էին աշակերտների համայնքին և աջակցել նրանց «իրենց ունեցվածքով,,:

Հովհաննես 4.5-42-ում նույնիսկ հաղորդվում է, որ մի սամարացի կին, ում հետ Հիսուսը զրուցել է, խոստովանել է իր հավատքը Հիսուսի հանդեպ՝ որպես Մեսիայի, ոչ միայն Հիսուսին, այլ նաև իր քաղաքում ապրող սամարացիներին: Հստակորեն ընդգծվում է, որ շատ սամարացիներ հավատացին Հիսուսին այս կնոջ քարոզչության հետևանքով (Հովհ. 4:39):

Աշակերտների համայնքին պատկանող մի շարք կանայք ներկա էին Հիսուսի խաչելությանը (Մատթ. 27:55,56; Մարկոս 15:40,41; Ղուկաս 23:49): Հովհաննեսի Ավետարանում կանայք հեռվից չեն տեսնում խաչելությունն ու մահը, այլ կանգնած էին խաչված Քրիստոսի մոտ (Հովհ. 19:25-27):

Կանայք նույնպես Հիսուսի հարության վկաներն են և այդ մասին պատմում են աշակերտներին: Հարության մասին զեկույցներում կանանց հանձնարարված է էական առաջադրանք, այն է՝ իրականացնել Հիսուսի հարության վաղ քրիստոնեական քարոզ: Հիսուսի հարության ուղերձը էական նախապայման է, որպեսզի եկեղեցին կարողանա հանդես գալ Ավետարանի իր տեղեկացմամբ:

Պողոսի նամակների վկայությունը

Ակնառու է, որ Հռոմեացիներին գրված նամակի վերջում (Հռոմ. 16) տղամարդկանց և կանանց հավասարապես են անվանվում ու ողջունվում: Սկզբում հիշատակվում է «քույր Ֆիոբին», «որը ղեկավարում է Կենքրեայի եկեղեցին» (Հռոմեացիներին 16.1): Ֆիոբին եկեղեցու ծառայության մեջ է և նաև կարևոր անձնավորություն է, ով օգնել է առաքյալին և համայնքին:

Հռոմեացիների 16.3-ում Պողոսը խնդրում է հռոմեական համայնքին ողջույններ ուղարկել իրենց գործընկերներից երկուսին՝ Պրիսկային և Աքվիլային, հավանաբար ամուսնական մի զույգի: Պողոսը գովում է նրանց երկուսին էլ այն բանի համար, որ՝ «իրենց վիզը իմ կյանքի համար էին դրել» (Հռոմեացիներին 16.4): Նրանք ղեկավարում էին տնային համայնք (Հռոմեացիներին 16.5): Երկուսն էլ նշված են Ա Կորնթացիների 16.19-ում, այս անգամ նրանց և իրենց տնային համայնքին ողջույնները փոխանցվում են Պողոսի կողմից:

Հռոմայեցիների 16.7-ում մի տղամարդ և մի կին, հավանաբար կրկին ամուսնական զույգ, նույնպես ողջունվում են. «Ողջույն Անդրոնիկոսին և Յունիային,

իմ ազգականներին և բանտակիցներին, որոնք հայտնի են առաքյալների մեջ և ինձնից առաջ եղել են Քրիստոսով»: Այս հատվածը վերջին շրջանում մեծ ուշադրության է արժանացել հիմնականում այն պատճառով, որ որոշ մեկնաբաններ կարծում են, որ Յունիան առաքյալ կոչվող կին է:

Նշված օրինակները պարզ են դարձնում, որ կանայք իսկապես կարևոր դեր են խաղացել քրիստոնեական համայնքներում, որոնց հետ Պողոսը կապ ուներ: Նրանք եկեղեցական ղեկավար գործառույթներ էին կատարում և ակտիվորեն ներգրավված էին հեթանոսներին Ավետարանը տեղեկացնելու գործում:

Մարգարեական խոսքը

Կորնթացիներին ուղղված առաջին նամակում կան տեղեկություններ ժամերգության ժամանակ տղամարդկանց և կանանց ճիշտ վարքագծի մասին, ըստ որի՝ տղամարդն ու կինը ակտիվ գործում են ժամերգության ժամանակ՝ նրանք աղոթում են և խոսում մարգարեաբար: Մարգարեական խոսքը Պողոսի փաստարկի շրջանակներում կարևոր դեր է խաղում՝ հակադրվելով զուտ էքստատիկ, ինքնին անհասկանալի և թարգմանության կարիք ունեցող լեզվով ասվող խոսքին . (...),,Իսկ մարգարեացողը մարդկանց հետ հավատն ամրացնելու, մխիթարության և սփոփանքի մասին է խոսում: Լեզվով խոսողն ինքն իրեն է ամրացնում, իսկ մարգարեացողը՝ եկեղեցին,, (Ա Կորնթացիներին 14:3.4բ): «Մարգարեական խոսքը» քարոզին նման առաջադրանք ունի, այն է՝ Ավետարանը հասկանալի կերպով տեղեկացնել:

Ա կորնթացիների իր մեկնաբանության մեջ Վոլֆգանգ Շրագեն նշում է. «Քանի որ համաձայն 12-ի խոսքը հիմնականում վերաբերում է համայնքում Հոգու ներգործությանը, որն անխտիր նվիրվում է յուրաքանչյուր քրիստոնյայի (...), [խոսքը] չի գնում այն պաշտոնների մասին, որոնք պետք է պատվիրակվեն կամ մերժվեն կամ նույնիսկ դրանց սեռային բաժանումների մասին, [առայժմ] չկա տարբերակում տղամարդու և կնոջ հատուկ գործառույթների միջև: Նախկինում ոչ մի տեղ նույնիսկ ակնարկ չկա, որ որոշակի տաղանդներ և չափանիշներ պատկանում են միայն տղամարդկանց»:

Կանանց գործունեության մերժումը

Առաջին դարի վերջում գրված հովվական թղթերը նպատակ ունեն պահպանել և թարմացնել Պողոսի ժառանգությունը: Այս արդիականացումը հաճախ հանգեցնում է կանանց դերի զգալի արժեզրկման: Նրանք հիմնականում դուրս են մնում համայնքային կյանքի գործունեությունից:

Համայնքի կազմակերպումն այժմ հիմված է հռոմեական ընտանիքի վրա, որի գլխին ընտանիքի հայրն է, իսկ կանայք պետք է տեղափոխվեն ետին պլան: Միևնույն ժամանակ նրանք ցանկանում էին պայքարել կեղծ ուսուցիչների դեմ, քանի որ ենթադրվում էր, որ կանայք, ովքեր երբեմն նաև ղեկավարում էին տնային համայնքները, հատկապես ենթակա էին կեղծ ուսուցման:

Կանանց լռելու պատվիրանը

Հետաքրքիր է, որ եկեղեցում կանանց գործունեության քննադատության վաղ վկայությունը գտնվում է Ա Կորնթացիների 14.33-36-ում: Այս հատվածը, որտեղ պահանջվում է, որ եկեղեցում կանայք պետք է լռեն, այսինքն՝ չպետք է օգնեն ձևավորել եկեղեցական կյանքը, ակնհայտորեն հակասում է Ա Կոր 11:5-ի տեղեկություններին: Նոր Կտակարանի գիտականների մեծ մասը համաձայն է, որ այս հատվածը ավելի ուշ ներդիր է: Դա նման է Ա Տիմոթեոսի 2:11–15-ի դիրքորոշմանը, որը ներառվել է Պողոսի ուշ շրջանի փաստաթղթում: Կանանց լռռ մնալու պատվիրանը Ա Տմ 2:11-15-ում նման է Ա Կորնթացիների 14:34,35-ին և մասամբ վերցնում է Ա Կորնթացիների 11:7-12-ի մոտիվները:

Ընդհանուր առմամբ, Ա Տիմոթ 2.11-15-ի տեքստը բնութագրվում է նրանով, որ բավականին կոշտ տոն է հնչում կանանց նկատմամբ՝ ,, Կինը թող հանդարտութեամբ սովորի ամեն հնազանդությունով: Կնոջը հրաման չեմ տալիս, որ սովորեցնի և ոչ էլ տղամարդու վրա իշխի, այլ որ լռռ կենա: Որովհետև Ադամն առաջ ստեղծվեց և հետո Եվան: Եվ Ադամ չխաբվեց, այլ կինը խաբվելով մեղք գործեց: Սակայն կապրի որդեծնութեան համար, եթէ կենա հավատքի և սիրո և սրբության մեջ պարկեշտության հետ,,:

Եվայի օրինակն ունենալով, ով համարվում է առաջին մեղավորը, կինը դուրս է մնում եկեղեցական բազմաթիվ գործունեություններից: Նրան թույլ չեն տալիս հավատքի մասին հարցեր տալ համայնքի համատեքստում: Կանանց պետք է հավատք սովորեցնել համայնքից դուրս: Բացի այդ, երեխա չունեցող կինը խտրականության է ենթարկվում: Կինը պետք է նաև հոգ տանի, որ որևէ երեխա չշեղվի քրիստոնեական հավատքից: Եթե դա այդպես չլինի, ուրեմն նրանց փրկությունը

հարցականի տակ է: Կանանց կողմից Ավետարանի հրապարակային քարոզչությունն արգելված է: Տղամարդը ուսուցանողն է, կինը՝ ուսուցանվողը և ստացողը:

Այնուամենայնիվ, Ա Տիմոթ. 2.11-15-ի և Ա կորնթ. 11.2-16-ի/ հատվածի (կանայք և տղամարդիկ ժամերգության ժամանակ) համեմատությունը ուշադրություն է հրավիրում երկու էական տարբերությունների վրա՝ մի կողմից Պողոս առաքյալը Ա կորնթաց 11-ում չի փաստարկում Եվայի գայթակղության պատմությամբ, մյուս կողմից, նա չի ստիպում կնոջը լուռ մնալ ժողովում (ինչպես հորդորվել է Պողոսի ուշ դպրոցում՝ համաձայն Ա Տիմոթ 2.12-ի):

Արդյո՞ք Եվան մեղք է բերում աշխարհ:

Պողոսի առաքելական հեղինակությամբ՝ Ա Տիմոթեոսի հեղինակը այսպես է արտահայտվում. „ Կնոջը թույլ չեմ տալիս, որ սովորեցնի, և ոչ էլ տղամարդու վրա իշխի, այլ որ լուռ կենա, որովհետև նախ Ադամը ստեղծվեց, հետո՝ Եվան»: Արարչագործության մասին երկրորդ հիշատակումը (Ծննդոց 2:4b-25) Ադամի և Եվայի առումով, ամրագրում է կնոջ ենթակայությունը տղամարդուն՝ որպես արարման կարգի անփոփոխ արտահայտություն:

Թեև Պողոսը Ա Կորնթացիների 11:8.9-ում ակնարկում է միայն երկրորդ արարչագործության մասին, այն այժմ արտահայտիչ արծարծվում է «Ադամ» և «Եվա» անունների անվանմամբ: Ենթակայության հանգամանքը առաջին հերթին հաստատվում է նրանով, որ սկզբում ստեղծվել է տղամարդը, իսկ հետո՝ կինը: Հետևյալ փաստարկը ցույց է տալիս, որ նամակի հեղինակը բավականին հեռու է Պողոսի մտածելակերպից, ինչպես այն պարզ է դառնում, օրինակ, հռոմեացիների նամակի Ադամ-Քրիստոս տիպաբանության մեջ. «Եվ Ադամը չխաբվեց, այլ կինը խաբվեց և խախտեց պատվիրանը. (Ա Տիմոթեոս 2:14):

Հեղինակը վերցնում է մարդու մեղքի մեջ ընկնելը մեկնաբանելու ուշ հրեական ավանդույթը, որում աստվածային պատվիրանի խախտման ողջ մեղքը դրվում էր կնոջ վրա: Պողոսի դիրքորոշումը շատ տարբեր է. «Ուրեմն, ինչպես մեղքը աշխարհ եկավ մեկ մարդու միջոցով, և մահը՝ մեղքով, այնպես էլ մահը տարածվեց բոլոր մարդկանց վրա, որովհետև բոլորը մեղանչեցին» (Հռոմեացիներ 5:12): Պողոսի համար Ադամը մեղքի և ընդհանրապես մահվան մեջ խճճված մարդու կերպարն է, սեռը ոչ մի դեր չի խաղում:

Եզրակացություն՝ Նոր Կտակարանի վկայությունը միանշանակ չէ: Կան տեղեկություններ, որոնք մատնանշում են կանանց ինտենսիվ մասնակցությունը առաքելությանը, համայնքային կյանքին և նաև ժամերգություններին: Մյուս կողմից, կան առաջին դարի վերջի վկայություններ, որոնցում կանանց արգելվում է ակտիվ մասնակցել համայնքային կյանքին: Առաքելությանը և ժամերգության արարողությանը մասնակցելն այսպիսով անհնար է դարձել: Հետևաբար, ներկայի միանշանակ նորմերը չեն կարող բխվել Նոր Կտակարանի այս տարբեր տեղեկություններից: Ըստ այդմ, ՇԱՄԺ-ն 2021 թվականի աշնանը որոշեց. «Նոր Կտակարանի նամակներում առանձին մերժողական հայտարարությունները ժամերգությանը և համայնքային կյանքին կանանց ակտիվ մասնակցության վերաբերյալ՝ չեն կարող բավարար հիմնավորում հանդիսանալ կանանց պաշտոնից բացառելու համար: Հետեւաբար, առաքյալների ծառայությունը, որն ունի վարդապետական լիազորություն, ունի առաջադրանք՝ հաստատելու որոշում կայացնելու համայնքային կարգ»:

Հին Կտակարանի արարչագործությունների պատմությունները վկայում են տղամարդու և կնոջ հավասարության և համարժեքության մասին, այնուամենայնիվ, որոշ առաքելական նամակներ առանձնացնում են տարբերություններ: Միայն սրա համար չէ, որ հարց առաջանում, թե ինչ է ասում Հիսուս Քրիստոսն այս առումով: Այդ մասին խոսք է գնում վարդապետական շրջաբերականի հաջորդ մասում:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243,8051 Ցյուրիխ/Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Կանանց ձեռնադրություն – վարդապետական ակնարկ

2022 թվականը կմնա Նորառաքելական պատմության գրքերում, որովհետև եկեղեցին առաջին անգամ վարդապետական պատասխան է տվել 160 տարվա վաղեմություն ունեցող հարցին: Սա կգործի 2023 թվականից՝ կանանց ձեռնադրության հնարավորությամբ:

Լուսանկարը՝ Անդրեաս Ռոտեռի

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը կանանց ձեռնադրության մասին տեսանկարահանման ժամանակ

Ավանդաբար Նորառաքելական եկեղեցին սկզբունքորեն միայն տղամարդկանց է նշանակում սարկավագի, քահանայի կամ առաքյալի պաշտոններում: Բացառություն եղավ 20-րդ դարի առաջին կեսին՝ սարկավագուհիների նշանակումով: Բայց ոչ մեկը, ոչ էլ մյուսը բավարար չափով հիմավորված չէին որպես ուսմունք:

Դավանաբանությանվրակատարվողաշխատանքով կամաց-կամաց պատասխան էր տրվում, որովհետև եկեղեցին իր ամբողջ ուսմունքը վերանայելու, կոնկրետացնելու և շարունակելու գործընթացում էր: Ժամանակի սղության պատճառով միայն եկեղեցու և խորհուրդների ըմբռնումը կարող էր ամբողջությամբ մշակվել մինչև 2012 թ: Պաշտոն հասկացողության վերլուծությունը մաց կիսատ:

Ամբողջը հաշվի առնելով

Այն ձևակերպվել է 2014 թվականից՝ համապարփակ իմաստով: Պարզաբանվելու էր՝

- նախ՝ Ի՞նչ է պաշտոնը:
- այնուհետև՝ Ինչպե՞ս է գործում պաշտոնը:
- Եվ միայն հետո՝ ո՞վ կարող է պաշտոն կրել:

Արդյունքները կազմվել են գրավոր: Միջանկյալ կարգավիճակի մասին տեղեկատվություն է տրամադրել գլխավոր առաքյալը 2017 թվականին: Իսկ 2019 թվականի Հոգեգալստյանը ուժի մեջ է մտել պաշտոնի և ղեկավար գործառույթների տարանջատումը :

Աստվածաշունչը խոշորացույցի տակ

«Ինչ»-ից և «ինչպես»-ից հետո «ով»-ը այդ ժամանակվանից ի վեր քննարկման առարկա է դարձել: Սա կարող է պարզաբանվել միայն Աստվածաշնչի պատշաճ գնահատմամբ: Սկզբունքորեն այստեղ երեք հարց է առաջանում՝

- Ի՞նչ է ասում Աստված:
- Ի՞նչ է ասում Հիսուս Քրիստոսը:
- Ի՞նչ են ասում առաքյալները:

Աստծոկամքը պարզ էդարձնումարարչագործության պատմությունը. Նա ստեղծեց տղամարդուն և կնոջը նույն չափով՝ իր պատկերով՝ նույն արժեքներով, նույն արժանապատվությամբ և կյանքի ձևավորման նույն պատասխանատվությամբ:

Հիսուս Քրիստոսի պարագայում իրավիճակը պարզ չէ՝ Նա ոչինչ չի ասել այդ մասին: Նրա գործողությունները միանշանակ չեն. Մի կողմից նա կանանց վերաբերվում էր ավելի լավ, քան ընդունված

էր այն ժամանակ: Իսկ մյուս կողմից, նա միայն տղամարդկանց կանչեց առաքյալ լինելու: Յուրաքանչյուր ոք, ով դա ընդունում է որպես օրինակ, պետք է հետևի նրան՝ նշանակելով միայն հրեաներին:

Առաքյալների նամակներում սրա վերաբերյալ հակասական մոտեցումներ է ներկայացվում՝ մեկ կինը պետք է ժամերգության ժամանակ մարգարեաբար խոսեր, մեկ էլ՝ պետք է լռեր: Մերժումը հիմնավորվում է նրանով, որ Եվան մեղք է բերել աշխարհ, մինչդեռ մյուս նամակներում այդ մեղքը տեսնում էին Ադամի մեջ:

Որոշում բոլորի համար

Ո՞րն է վերջնականը: Աստծո բարի արարչագործությունը ապահովում է տղամարդկանց և կանանց հավասարությունը: Այն ամենը, ինչը, գուցեև, դրա դեմ է խոսում Հիսուսի օրինակով կամ առաքյալների նամակներում, չի կարող հակառակ լինել Արարչի կամքին:

Այսպիսով, առաքելական ծառայությանը մնում է որոշում կայացնել եկեղեցու ապագայի համար: Արդյո՞ք նրանց թույլ է տրվում դա անել: Անշուշտ, որովհետև Հիսուս Քրիստոսն ինքը առաքյալներին լիազորություն տվեց արձակելու և կապելու, այսինքն՝ կանոնակարգերը պարտադիր համարելու:

Այսպիսով, 2022 թվականի հունիսին շրջանային առաքյալների ժողովը, խորհրդակցելով բոլոր առաքյալների հետ, որոշեց «որ կանանց կարելի է վստահել պաշտոնի լիազորություն»: Այնուամենայնիվ, ,, պաշտոնի առաջադրանքը կանանց առումով պետք է տրվի այնտեղ, որտեղ այն հասարակության և համայնքի կողմից ընդունվում է,,: Քանի որ կան մշակութային ասպեկտներ, որոնք պետք է հաշվի առնել ոչ միայն անցյալի վերաբերյալ աստվածաշնչյան վերլուծության մեջ, այլ նաև՝ ներկայի իրականության մեջ:

Աստվածաշնչի կանայք

«Սովորեցրու ինձ սովորեցնել» կարգախոսի ներքո՝ Նիգերիայից կանայք հավաքվել էին երկօրյա միջոցառման, որը հենց իրենց համար էր կազմակերպված: Հագած ավանդական զգեստներ եկեղեցական տարբերանշաններով և հատուկ այս միջոցառման համար նախատեսված շապիկներով՝ կանայք ապրիլի 9-ից 10-ը ամենից առաջ մի բան են զգացել՝ միասնություն: Սեմինարների, աշխատաժողովների և առողջապահական դասախոսությունների ժամանակ նրանք շատ բան սովորեցին, որ կարող են փոխանցել իրենց համայնքին: Այդ ընթացքում նաև շատ երգեցին: Առաքյալ Օսկար Կաբանգա Նվանգան ժամերգություն տոնեց Ծաղկազարդի տոնի փակման առիթով: Իր քարոզում նա անդրադարձավ Աստվածաշնչի երեք հատուկ կանանց՝ Դեբորային, Եսթերին և Մարիամ Մագդաղենացուն:

Լուսանկարները՝ ՆԱԵ Նիգերիա

Տեղեկատու

02.07.2023	Կաբինդա (Անգոլա)
09.07.2023	հետո կհաստատվի (Ֆինլանդիա)
16.07.2023	Կինշասա (ԴՀ Կոնգո)
18.07.2023	Ինդիոֆա (ԴՀ Կոնգո)
23.07.2023	Կանագա (ԴՀ Կոնգո)
30.07.2023	Սաարբրյուքեն(Գերմանիա)
06.08.2023	Պերտ (Ավստրալիա)
09.08.2023	Ադելաիդա (Ավստրալիա)
11.08.2023	Տամա (Ճապոնիա)
13.08.2023	Չանչոն (Հարավային Կորեա)
17.09.2023	Բերն- Օսթերմունդիգեն (Շվեյցարիա)
24.09.2023	Էրի (ԱՄՆ)

New Apostolic Church
International